ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

ՏՆՕՐԵՆ՝ Մ. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

30.08.2023թ.

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ՀՐԱԶԴԱՆԻ N2 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ՊԼԱՆ

ԴԱՍԱՐԱՆ՝ IIIբ

ԴԱՍՂԵԿ՝ Մ. Խաչատրյան

ԴԱՍԱՐԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

3-րդ Բ դասարանում սովորում են 21 աշակերտ՝ 12 տղա, 9 աղջիկ: Աշակերտները խելացի են, կարգապահ: Յուցաբերում են լավ վարքագիծ: Ձևավորված է առողջ և միահամուռ կոլեկտիվ: Դասերին ներկայանում են պատրաստ, ունեն պատասխանատվության զգացում: Դասարանում կա փոխադարձ հարգանք, միմյանց նկատմամբ ուշադրություն: Սիրում են դպրոցը, ծանոթ են դպրոցի կարգ ու կանոնին:

2022-2023 ուստարում դասարանում եղել են 5 գերազանց առաջադիմությամբ, 10 հարվածային և 6 բավարար առաջադիմությամբ աշակերտներ:

Հոկտեմբեր ամսին դասարանը համալրվել է ևս 7 աշակերտով՝ 3 աղջիկ, 4 տղա: 1 աղջիկ կրկին տեղափոխվել է այլ դպրոց:

ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Քաղաքացիական, բարոյական
Խնդիրները՝

Քաղաքացիական պատասխանատվության, արժանապատվության ձևավորում, հարգանք իր երկրի մշակույթի և պատմության հանդեպ, խթանել բարոյական վարքի ձևավորմանը:

Հոգևոր դաստիարակություն
Խնդիրները՝

Հոգևոր դաստիարակությունը սկսվում է հայրենիքի հանդեպ սիրուց: Հայրենիքը սկսվում է տնից, հողից, ջրից: Հայեցի դաստիարակություն նշանակում է սիրել հայոց լեզուն, մեր ավանդույթներն ու սովորույթները, երգն ու պարը, մշակույթը, ազգային նվաճումները, հայտնագործությունները:

Գեղագիտական դաստիարակություն
Խնդիրները՝

Գեղագիտական դաստիարակության զարգացմանը մեծապես նպաստում են արվեստի օջախներ այցելելը, էքսկուրսիաները և այլն:

Ֆիզիկական առողջության
Խնդիրները՝

Ֆիզիկական դաստիարակությունը ուղղված է սովորողների օրգանիզմի ձևաբանական և ֆունկցիոնալ կատարելագործմանը, արտաքին միջավայրի անբարենպաստ պայմանների դեմ կայունության ձևավորմանը, հիվանդությունները կանխելուն և առողջության պահպանմանը:

Աշխատանքային դաստիարակություն

Խնդիրները՝

Աշխատանքային դաստիարակություն իրենից ներկայացնում է համատեղել սովորողների մտավոր և ֆիզիկական աշխատանքի ձևերը: Այդ իսկ պատճառով պետք է անընդհատ հարստացնել և համալրել նրանց աշխատանքային գիտելիքները, կարողությունները և հմտությունները:

Իրավական դաստիարակություն

Խնդիրները՝

Նպատակն է ձևավորել սեփական իրավունքներն ու պարտականությունները ճանաչելու կարողություններ: Իրավական գիտակցության և հանդուրժողականության խթանում:

Էկոլոգիական դաստիարակություն

Խնդիրները՝

Նպատակն է շրջապատող միջավայրի նկատմամբ դպրոցականների պատասխանատվության ձևավորումն է: Պետք է անձի մեջ դաստիարակել, որ բնությունը ազգային հասարակական հարստություն է, որը պետք է պահել խնամքով:

Ռազմահայրենասիրական դաստիարակություն

Խնդիրները՝

Նպատակն է ձևավորել հայրենիքի նկատմամբ պատասխանատու վերաբերմունք՝ հիմնված անվերապահ սիրո և հարգանքի վրա, ակնածանք՝ հայ ազատամարտիկների նկատմամբ, ձգտում՝ կատարելու հայրենանվեր քայլեր:

ՇԱԲԱԹԱԿԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Ուսումնական շաբաթ	Ուսումնադաստիարակչական աշխատանքների բովանդակությունը	Կատարման ժամկետ
1-ին շաբաթ	Ուսումնադաստիարակչական աշխատանքների բովանդակությունը	05.09.2023
2-րդ շաբաթ	Դասագրքերի բաշխում: Զրույց գիտելիքի օրվան նվիրված, զրույց աշակերտների սանիտարահիգիենիկ պակվանների պահպանման մասինԶրույց «Համագործակցություն»	12.09.2023
3-րդ շաբաթ	Դասարանի հերթապահության կազմում: Վերահսկել դասագրքերիպահպանումը, Զրույց «Օրվա ռեժիմի ճիշտ կազմակերպում», կազմել օրինակելի օրվառեժիմ	19.09.2023
4-րդ շաբաթ	Դասասենյակի կանաչապատում, ծաղիկների խնամք, զրույց «ինչո՞ւ էանհրաժեշտ օդափոխել սենյակը» Զրույց «Ես քաղաքացին եմ անկախ Հայաստանի»	26.09.2023
5-րդ շաբաթ	Դասարանական կարգապահական կանոնների՝ աշակերտների հետ համատեղ մշակում, լուսակիրով խաղերի կազմակերպում, Զրույց «Լուսակիր»	03.10.2023
6-րդ շաբաթ	Իրավունքների և պարտականությունների մասին Զրույց «Երեխաների իրավունքներ»	10.10.2023
7-րդ շաբաթ	Կարգապահական հարցերի քննարկում, արդեն մշակված կանոններիվերանայում, պահպանման վերահսկում Զրույց «Խնդիրների համատեղ լուծում»	17.10.2023
8-րդ շաբաթ	Վերհիշել գրադարանից օգտվելու կարգը Զրույց «Ի՞նչ գիտեք ճանապարհային երթևեկության կանոնների մասին»	31.10.2023
9-րդ շաբաթ	Վերահսկել դասագրքերի պահպանումը, կազմակերպել վերանորոգումը՝ հարկ եղած դեպքում, պահպանել վարվեցողության կանոնները Զրույց «Հանդուրժողականություն»	
10-րդ շաբաթ	Դասարանը նախապատրաստել ջեռուցման շրջանին, առողջության և սպորտի փոխկապակցվածության մասին քննարկում Զրույց «Բանակցություններ»	
11-րդ շաբաթ	Կարգապահական կանոնների վերահսկում Զրույց «Ինչպես անցնել փողոցը», «Անվտանգ երթևեկություն» պաստառի պատրաստում և քննարկում, թեմային առնչվող տեսաֆիլմի դիտում	
12-րդ շաբաթ	Ծանոթացնել դպրոցի տարհանման պլանին: Զրույց «Արտակարգ իրավիճակների ազդարարումը և բնակրության գործողությունների հաջորդականությունը»	
13-րդ շաբաթ	Սովորողների սանիտարահիգիենիկ վիճակի ստուգում Զրույց «Աշակերտների տարրական գործողությունները կենցաղայինվտանգավոր իրադրություններում»	

14-րդ շաբաթ	Զրույց-քննարկում՝ ինչպես օգնել ընկերոջը, Ուսուցողական խաղ՝ «Ճանապարհային երթևեկություն» Զրույց «Խաչմերուկների տեսակները փողոցում»	
15-րդ շաբաթ	Նախապատրաստել նամակներ Զմեռ Պապիկին, կազմակերպելքննարկում «Ամանորյա հրաշքներ» Զրույց «Արդյունավետ հաղորդակցում»:	
16-րդ շաբաթ	Կազմակերպել զրույց քննարկում «Առողջ ապրելակերպ»Զրույց «Շրջակա միջավայրը և նրա բաղադրիչները»	
17-րդ շաբաթ	Տարհանման կանոնների վերհիշում, անվտանգության կանոններիպահպանում Զրույց «Սուր կենցաղային իրադարձությունները և դրանցազդեցությունը»	
18-րդ շաբաթ	Հայոց բանակի կազմավորման և կարևորության մասին քննարկում,հերոսների մասին տեսաֆիլմի դիտում Գործնական պարապմունք: Խաղ «Ճանապարհային երթևեկությանկանոններ»	
19-րդ շաբաթ	Դասագրքերի վիճակի ստուգում: Բանավեճ՝ պահպանենք բնությունը,պահպանենք առողջությունը, Զրույց «Բնության վերամշակողներ»	
20-րդ շաբաթ	Մշակել վարվեցողության կանոններ՝ «Բարեկիրթ ասպետ և օրիորդ», հետևել դասասենյակի սանիտարահիգիենիկ վիճակին Զրույց «Սեռային /գենդերային/ խնդիրներ»	
21-րդ շաբաթ	Հետևել դասարանի սանիտարահիգիենիկ վիճակի պահպանմանը:Բանավեճ՝ վատ սովորույթներ, ինչպես պայքարել դրանց դեմ կամ խուսափել դրանցից Զրույց «Շրջակա միջավայր»	
22-րդ շաբաթ	Ստուգել դասագրքերի վիճակը, անհրաժեշտության դեպքում կազմակերպել վերանորոգում, ճիշտ վարվեցողության կանոնները հասարակական վայրերում քննարկում -բանավեճ Զրույց «Ինչպես օգտվել տրանսպորտից»	
23-րդ շաբաթ	Ուսուցողական դաս՝ տեսաֆիլմի դիտում, քննարկել Եզոպոսի և Վ.Այգեկցու առակները Զրույց «Աշակերտների տարրական գործողությունները կենցաղայինվտանգավոր իրադրություններում»	
24-րդ շաբաթ	Դասագիքերի պահպանման վերահսկում, համատեղ աշխատանքների կազմակերպում՝ խմբային աշխատանքու աշխատանքի բաժանմանկազմակերպում Զրույց «Մասնակցություն՝ ակտիվ քաղաքացիական դիրքորոշում»	
25-րդ շաբաթ	Վերահսկել դասասենյակի սանիտարահիգիենիկ վիճակը, Ճանապարհային երթևեկության կանոնների վերաբերյալ տեսաֆիլմի դիտում,	

	Զրույց «Հետիոտնը փողոցում»	
26-րդ շաբաթ	Առողջության և սպորտի սերտ կապերի բացահայտում քննարկմանմիջոցով Զրույց «Ինքնօգնության և փոխօգնության տարրերը կենցաղային իրադրություններում ստացած վնասվածքների դեպքում»	
27-րդ շաբաթ	Կարգապահական կանոնների վերահսկում, հարկ եղած դեպքում դրանց վերանայում և փոփոխում, քննարկման կազմակերպում՝ առողջ մարմնում առողջ հոգի Զրույց «Միջնորդություն»	
28-րդ շաբաթ	Կոլոկտիվի գաղափարի ձևավորում՝ ուսուցողական խաղերի միջոցով, փոխօգնության գաղափարի ձևավորում, ուսուցողական մուլտֆիլմերի քննարկում Զրույց «Էկոգանձատուփ»	
29-րդ շաբաթ	Կազմակերպել քննարկում՝ համակարգչից օգտվելու և անվտանգության պահպանման կանոնները, ցուցադրել հիմնական կետերը, որոնց պետք է ուշադրություն դարձնել կայք մուք գործելիս Գործնական աշխատանք	
30-րդ շաբաթ	Դասարանի սանիտարահիգիենիկ վիճակի վերահսկում, վերհիշելտարհանման կանոններն ու կարգը Զրույց «Սուր կենցաղային իրադարձությունները և դրանցազդեցությունը»	
31-րդ շաբաթ	Մեր հերոսների հետքերով՝ նկարների ցուցադրում, տեսաֆիլմի դիտում. դերային խաղի միջոցով ստեղծել կոնֆլիկտային իրավիճակ և գտնել լուծումներ Զրույց «Կոնֆլիկտների հաղթահարում»	
32-րդ շաբաթ	Դասարանական կանոնների վերահսկում, դերային խաղեր երթևեկության կանոնների պահպանման վերաբերյալ Զրույց «Չկարգավորվող խաչմերուկներ։ Դրանցից օգտվելու կարգը»	
33-րդ շաբաթ	Դասագրքերի նախապատրաստում դպրոցի գրադարանին հանձնելու, խմբային քննարկման միջոցով վերհանել ջերմոցային էֆեկտի բացասական ազդեցությունը, դիտել տեսաֆիլմ՝ բնության աղտոտման կանխարգելման նպատակով Զրույց «Ջերմոցային էֆեկտ»	
34-րդ շաբաթ	Էքսկուրսիա	

ԷՔՍԿՈՒՐՍԻԱՆԵՐ

Հ/Հ	ՆՊԱՏԱԿԸ	ԷՔՍԿՈՒՐՍԻԱՅԻ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ /նշել կետերով/	ՕՐԸ
1	Ուսումնասիրել և ծանոթանալ կենդանաբանական այգու կառուցվածքին ու ֆունկցիաներին, այնտեղ պահվող կենդանիներին, նրանց կերակրման եղանակներին: Տեսնել Կարմիր գրքում գրանցված էնդեմիկ կենդանիներին: Ձևավորել գեղագիտական ճաշակ, դաստիարակել հասարակության մեջ պատշաճ պահվածքի դրսևորում:	Կենդանաբանական այգի Կ. Ստանիսլավսկու անվան թատրոն «Մեր մանկության կրկեսը»	26.10.2023

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Հ/Հ	ԹԵՄԱՆ	ՕՐԸ
1	Սեպտեմբերի 1: Գիտելիքի օր	01/09/2023
2	Ուսուցչի միջազգային տոն	05/10/2023
3	<<Ամանորյա հրաշքներ>>	22/12/2023
4	<<Թումանյանական պատումներ>>	21/02/2024
5	Տագնապ , միջոցառում վարժանք, դպրոցի աշակերտների տարահանում:	01/03/2024
6	<<Միջինքի արարողություն>>	15/03/2024
7	Մայրերի տոն	07/04/2024
8	Մեր մանկության մոլորակը	01/06/2024

ԾՆՈՂԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ

	ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 1	ՕՐԸ
ՍԵՊՏԵՄԲԵՐ	ՕՐԱԿԱՐԳ 1. Դասագրքերի բաշխում 2. Դասագրքերի պայմանագրերի կնքում: 3. Դասարանական ծնողական խորհրդի ընտրություն: 4. Կարգապահական հարցերի քննարկում:	08/09/2023

	ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2	ՕՐԸ
ՀՈԿՏԵՄԲԵՐ	ՕՐԱԿԱՐԳ 1. Աշակերտների դպրոցական առօրիայի մասին ծնողների իրազեկում: 2. Ուսումնական –դաստիարակչական , նպատակային էքսկուրսիայի վերաբերյալ հարցերի քննարկում: 3. Ընթացիկ հարցերի քննարկում:	13/10/2023

ԴԱՍՂԵԿԻ ԴԱՍԱԼՍՈՒՄՆԵՐ

Հ/Հ	Օրը	Առարկան, դասավանդող ուսուցիչը	Դասի թեման	Դասալսման նպատակը
1	18.09.2023	Անգլերեն Ն. Հարությունյան	At School	Երեխաների մասնակցությունը դասին:
2	28.09.2023	Ֆիզկուլտուրա Գ. Գրիգորյան	Քայլք ճիշտ կեցվածքով:	Ամբողջ դասարանի ներգրավվածություն:
3	04.10.2023	Ֆիզկուլտուրա Գ. Գրիգորյան	Տեսական տեղեկությունների հաղորդում, ստուգում:	Երեխաների վարքը դասին:
4	05.10.2023	Ռուսաց լեզու Լ. Իսրայելյան	Едет ежик	Ստուգել աշակերտների՝ դասին պատրաստվածությունը: